

Ո՛չ մի շնատէր իւր շանը ինքը չի սպանում, որովհետեւ նա իւր վերայ երախտիք ունի: Եւ երբ իւր բնական մահով սատկելու է լինում, տէրը կամենալով թեթեացնել նրա տանջանքները գնում է մօտը և ասում. «Մեր աղ ու հացը քե խալալ հինի»: (Մեր աղ ու հացը քեզ հալալ լինի):

Հոգոյս.—Ժամանակով մի հարս տանը լողանալիս՝ սկեսայրը ներս է մտնում: Հարսը սաստիկ ամօթխածութիւնից թռչուն է դառնում և սանրը գլխին հերթիկից դուրս թռչում:

Արօրիկ.—Մեղք է համարում այս թռչնին սպանել, որովհետեւ սրանից ամէն մինը ունի մի ընկեր, որը սաստիկ վշտանալով՝ չի կարողանում տանել այս կորուստը և սատկում է: Արօրիկ սպանողը «իւանջուղ» կոչուած ցաւն է ստանում:

Արագիլ.—Սրան կոչում են լակակ, երբեմն էլ «հաճի-լակ-լակ», հաւանականօրէն թուրքերի ազգեցութեամբ, որովհետեւ նրանք էլ են նոյն մակդիրը տալիս սրանց, կարծելով, թէ Մեկ-կայից են գալիս: Մեղք են համարում սրանց սպանել կամ ֆա-սել, որովհետեւ սրանք ևս արօրիկների պէս զրկուելով իրենց ըն-կերօրից՝ ուրիշը չեն ուզում գտնել և վշտից սատկում են:

Գարնանը՝ երբ սրանք առաջին անգամ երևում են, գիւղա-ցիները մեծ ուշադրութեամբ դիտում են, թէ ի՞նչ կայ նրանց կտուցներում և սրանից գուշակութիւն անում, այսպէս՝ եթէ հացի կտոր լինի՝ առատութիւն է լինելու, եթէ չոփ է՝ (ծղոտ) անբեր-րութիւն, եթէ կտաւ՝ մահ:

Եթէ արագիլը մինի տան կտրանը բոյն շինի՝ այդ տնեցի-ներին բախտաւորութիւն է սպասում:

ՇԷՄՔԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Նոր-Բայազէտցիները տանը, գերդաստանին պատահած բա-րեբաղդութիւններն ու դժբաղդութիւնները վերագրում են տան շէմքի ազգեցութեան: Այսպէս, օրինակ, եթէ շէմքը բերում ա», նրանից անցած և ներս մտած անասունը, նորահարսը սկսում են գերանալ, օգուտ տալ, երկար ապրել, իսկ եթէ շէմքը չի բե-րում ա», լղարում են, օգուտ չեն տալիս և շուտով մեռնում են: «Բերող շէմք» յարգւում, սիրւում է ոչ միայն իւր տնեցիներից, այլ և զրկիցներից, որոնք նրա կտրանը մատաղ են անում-դառը մորթում են այնպէս՝ որ արիւնը ներքե հոսելով ներկում է դառն ճակատը և շէմք:

Զրեհրող շէմի տակ յուռութենէր են թաղում, դռան վերեւ չորացած փուշ են աստղաձև կապում, և եթէ այս միջոցները չեն ոգնում Երեւոյ՝ դարձնելու, պատ են քաշում և մի ուրիշ տեղից են դուռ բաց անում:

Երբ նորապսակները եկեղեցուց տուն են վերադառնում, շէմի առաջ երկու ափսէ են դնում, որ կոտրեն, զոհն և ապա անցնեն: Նաեւ քաւորը իւր թուրը խրում է դռան ճակատին և այդպէս բռնում, որ նորապսակներն անցնեն: Տղոցկանը, ինչպէս և՛ տատմէրը, առաջին անգամ շէմից անցնելիս ծայրին սոխ անցկացրած շիշ են առնում ձեռին, և անցնելիս Յիսուս Քրիստոս ասում:

Երբ մի երեխայ աչքերը խաղացնում է, Աւետարան ունեցող տան շէմին երկու մեխ են խփում, որ դադարի խաղացնելուց, առողջանայ:

Շէմի վրայից միմեանց ձեռք չեն տալիս և բարեկամ, այլապէս կը կռուին միմեանց հետ:

Տղարեբքի ժամանակ երեխայի ընկերքը թաղում են շէմքի մօտ:

Երբ պառկած շունը սատկում է՝ նրա գլուխը կտրում են և շէմքի տակ թաղում. դա յուռութ է համարում «չարոցի» դէմ:

ՏԱՐՐԵՐԻ ԵՒ ՖԻԶԻԲԱԿԱՆ ԵՐԵՒՈՅՔՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Երկիր.—Սրա ձեւ տափարակ է, անծայր և անվերջ: Յամաքը շրջապատուած է ջրով, որ Մեռեալ ծով կամ Ովկիանոս է կոչւում, ուր մշտական խաւար է ափրում և որի մէջ ոչ մի կենդանի չկայ, բացի մի մեծ ձկից: Այս ձուկը փաթաթուել է ցամաքին և մի թիղ է մնացել՝ որ գլուխը պոչին հասնի, երբ հասաւ՝ աշխարհը պիտի կործանուի:

Երկիրը կանգնած է եզան պողերի վրայ, երբ նա Աստուհրամանով ցնցում է գլուխը՝ երկրաշարժ է յառաջանում:

Երկիրը երկու աշխարհներից է բաղկացած՝ լոյս և մութ: Լոյս աշխարհը երկրի վրայ է գտնւում, իսկ մութը՝ երկրի մէջ: Պատահում է, որ մարդիկ ընկնում են մութ աշխարհը, այստեղ երկու «դոշ» (խոյ) կայ՝ սև և սպիտակ, որոնք գալիս միմեանց հետ կռւում են. եթէ մութ աշխարհ ընկածը կարողանայ «Իրեն ցկել» (հեծնել) սև դոշի վրայ՝ սա նրան կտայ սպիտակին և վերջինս նրան կը հանէ լուս աշխարհ: Իսկ եթէ չէնց սկզբից սպիտակի վրայ հեծնի՝ սա կը ձգէ նրան սևի վրայ և վերջինս կիջնցնէ նրան մութ աշխարհի խորքերը:

Լուս աշխարհում միշտ էլ, Ադամից առաջ էլ, մարդիկ են ե-